«Շիրակացու ճեմարան»
Միջազգային գիտակրթական համալիր

# ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

## 2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

## 8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Հայոց լեզու

Արքայական խոսքը մեր կմնա հավետ...

Վահան Տերյան

1. Սիրելի բարեկամ, ուշադի՛ր կարդա զրույցը...

Մի ժամանակ Հայաստանում մարդիկ առևտրով կամ արհեստով էին ավելի շատ զբաղվում: Հող մշակել չէին սիրում: Հաճախ արտերը անջրդի ու անմշակ էին մնում:

Թագավորը հրաման արձակեց, որ վարեն ու ցանեն դաշտերը, ցորեն աճեցնեն, որ ամեն ոք հաց ունենա, և սովը չավերի երկիրը:

Բայց շատերը չանսացին թագավորի կոչին. շարունակեցին առևտուր անել: Այդ ժամանակ նա իր մոտ կանչեց համբավավոր մի առևտրականի և մի իմաստուն շինականի, նրանց յոթ օր ժամանակ տվեց, որ իրեն ներկայանան ընտանիքներով:

– Ձեզ հետ կվերցնեք այն ամենը, ինչը ձեզ համար կարևոր և էական է, – ասաց արքան:

Յոթ օր անընդմեջ հարուստ վաճառականը ոսկուց և շողակներից զարդեր պատրաստել տվեց, կնոջն ու աղջիկներին զուգեց-զարդարեց ապարանջաններով, մանյակներով ու մատանիներով: Իսկ գեղջուկը աղաց ցորենը, կնոջը հրամայեց մեծ բանակությամբ լավաշ թխել, իսկ աղջիկներին՝ կարկանդակ ու գաթա:

Նշանակված օրը եկան թագավորի ծառաներն ու երկու ընտանիքներին առաջնորդեցին պալատի կողքին գտնվող երկու խրճիթ: Նրանց առանձին-առանձին փակեցին այդ բողոքներում՝ թույլ տալով վերցնել իրենց յոթ օրվա պատրաստածը: Թագավորը արգելեց նաև ցանկացած փոխանակություն ընտանիքների միջև:

Երեկոյան՝ ընթրիքին, ամեն ընտանիքին միայն մեկական գավ ջուր տվին...

2. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր բառակապակցություններին համապատասխանող բառերը (3 միավոր):

Լսել և ենթարկվել-----անսալ----------

Թևի զարդ կամ թևնոց ------ապարանջան--------

Պարանոցի զարդ կամ վզնոց-------մանյակ----------

Երեկոյան հաշ----------ընթրիք---------

Երկարավիզ ու նեղբերան անոթ----------գավ-----

Հատուկ ձևով մշակված թանկարժեք քար- շողակն

3. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր հոմանիշ բառերի զույգերը (2 միավոր):

Առևտրական-վաճառական

Շինական-գեղջուկ

Խրճիթ-բողոքի

Թագավոր-արքա

4. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր տրված բառերի հականիշները (2 միավոր):

Համբակ-----իմաստուն----------
Ջրարբի---------անջրդի----------
Ապարանք------խրճիթ/քողտիկ----------
Հագուրդ----------սով----------

5. Տեքստում գտիր և դո՛ւրս գրիր է, տալ, կա, շեն արմատներով բառերը և վերլուծի՛ր բառակազմորեն: Այդ արմատներով մեկական բառ էլ դո՛ւ կազմիր (4 միավոր):

Է – էական – է+ական էություն, մանրէ, անէ

Տալ- առևտուր – առ+և+տուր՝ տալ բայի հրամայական եղանակը, տվյալ, ձեռնտու

Կա – ներկայանալ – ներ+կա+ /յ/ +ան+ալ կայարան, ենթակա, բացակա

Շեն-շինական – շին/շեն+ական է/ե/ ձայնավորը հնչյունափոխվել, դարձել է ի

շինարար, շինություն

6. Տեքստում գտի՛ր թվական բառերը, դրանցից մեկի արմատով կազմի՛ր հնարավորինս շատ բառեր, այնպես որ թվական չլինեն (3 միավոր):

Ցոր

Երկու – երկուշաբթի, երկվորյալ, երկմտել, երկհարկանի, երկամյա, երկօրյա

7. Զրույցը վերնագրի՛ր, ապա շարունակի՛ր պատմությունը, հորինի՛ր ավարտ: Արտահայտի՛ր քո վերաբերմունքը այս զրույցի մասին (6 միավոր):

Գնահատման սանդղակ

| Միավոր | Նկարագրություն |
|---|---|
| 6 | 1. Վերնագրել է զրույցը, որը համապատասխանում է բովանդակությանը:<br>2. Զրույցի համար հորինել է տրամաբանական շարունակություն և ավարտ:<br>3. Ներկայացրել է իր վերաբերմունքը և կարծիքը զրույցի մասին:<br>4. Շարադրանքում կիրառել է հարուստ բառապաշար...<br>5. Մտքերը տրամաբանորեն հաջորդում են միմյանց...<br>6. Քերականական, ուղղագրական, կետադրական, բառի գործածության սխալներ թույլ չի տալիս... |
| 5 | 1. Վերնագրել է զրույցը, որը համապատասխանում է բովանդակությանը:<br>2. Զրույցի համար հորինել է տրամաբանական շարունակություն և ավարտ:<br>3. Ներկայացրել է իր վերաբերմունքը և կարծիքը զրույցի մասին:<br>4. Շարադրանքում կիրառել է հարուստ բառապաշար:<br>5. Մտքերը տրամաբանորեն հաջորդում են միմյանց:<br>6. Քերականական, ուղղագրական, կետադրական, բառի գործածության 1-2 սխալ է թույլ տալիս: |
| 4 | 1. Վերնագրել է զրույցը, որը համապատասխանում է բովանդակությանը:<br>2. Զրույցի համար հորինել է տրամաբանական շարունակություն և ավարտ:<br>3. Ներկայացրել է իր վերաբերմունքը և կարծիքը զրույցի մասին:<br>4. Շարադրանքում կիրառել է ոչ այնքան հարուստ բառապաշար:<br>5. Մտքերը տրամաբանորեն հաջորդում են միմյանց:<br>6. Քերականական, ուղղագրական, կետադրական, բառի գործածության 3-4 սխալ է թույլ տալիս: |
| 3 | 1. Վերնագրել է զրույցը, որն այնքան էլ չի համապատասխանում բովանդակությանը:<br>2. Զրույցի համար հորինել է շարունակություն և ավարտ: |

| | |
|---|---|
| | 3. Ներկայացրել է իր կարծիքը գրույցի մասին:<br>4. Շարադրանքում կիրառել է ոչ այնքան հարուստ բառապաշար:<br>5. Մտքերի տրամաբանությունը տեղ-տեղ խախտված է:<br>6. Քերականական, ուղղագրական, կետադրական, բառի գործածության 5-6 սխալ է թույլ տալիս: |
| 2 | 1. Վերնագրել է գրույցը, որն չի համապատասխանում բովանդակությանը:<br>2. Գրույցի համար հորինել է շարունակություն և ավարտ:<br>3. Չի ներկայացրել է իր կարծիքը գրույցի մասին:<br>4. Շարադրանքում կիրառել է աղքատիկ բառապաշար:<br>5. Մտքերի տրամաբանությունը հաճախ խախտված է:<br>6. Քերականական, ուղղագրական, կետադրական, բառի գործածության 7-8 սխալ է թույլ տալիս: |
| 1 | Շարադրանքը կապ չունի գրույցի հետ: |
| 0 | Առաջադրանքները չի կատարել... |